

<p>ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ թիվ ԲՏԱՆ-ՄԱԾՁԲ-2025/27</p> <p>ք. Երևան 27.11.2025թ.</p>	<p>PUBLIC PROCUREMENT CONTRACT FOR PROVISION OF FOR STATE NEEDS No BTAN-MATzDzB-2025/27</p> <p>27.11.25 city of Yerevan 2025</p>
<p>Հայաստանի Հանրապետության բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարությունը (ՀՀ ԲՏԱՆ) ի դեմս գլխավոր քարտուղարի փոխարինող Երեմ ՄԻՍՈՆՅԱՆԻ, որը գործում է Նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու)՝ մի կողմից, և Ֆրանսիայի օրենսդրության համաձայն 722031176 ծածկագրի ներքո որպես սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն գրանցված «Defense Conseil International» (DCI) ընկերությունը ի դեմս «DCI DESCO» մասնաձյուղի փոխնախագահ Ժան-Քրիստոֆ ՄԱՀՈՅԻ, որը պատշաճ կերպով լիազորված է (այսուհետ՝ Կատարող)՝ մյուս կողմից, այսուհետ համատեղ՝ Կողմեր, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.</p>	<p>The Ministry of High-Tech Industry of The Republic of Armenia (MHTI of the RA) represented by Yerem SIMONYAN, Deputy Secretary-General, acting on the basis of the Charter of the Ministry (hereinafter referred to as “the Contracting Authority”), on one side, and Defense Conseil International (DCI), a limited liability company incorporated under the laws of France under number 722031176, represented by Jean-Christophe MAHO, DCI DESCO branch Deputy Director, duly empowered (hereinafter referred to as “the Contractor”), on the other side, hereinafter collectively referred to as “the Parties”, concluded this Contract on the following:</p>
<p>1.ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՈՒՐԿԱՆ</p>	<p>1.SUBJECT MATTER OF THE CONTRACT</p>
<p>1.1.Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է C4ISR ուսուցման և ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ Ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մաս կազմող 1-ին հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:</p> <p>1.2. Ծառայությունը մատուցվում է 1-ին հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներում:</p>	<p>1.1 The Contracting Authority shall assign, and the Contractor shall undertake to perform the obligation of providing C4ISR training, services (hereinafter referred to as “the Service”), pursuant to the requirements of Technical Specification-Procurement Schedule prescribed by Annex No 1 constituting an integral part of this Contract (hereinafter referred to as “the Contract”).</p> <p>1.2 The Service shall be provided in compliance with the Technical Specification-Procurement Schedule prescribed by Annex No 1 and within the prescribed time limits.</p>
<p>2.ԿՐՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ</p>	<p>2. RIGHTS AND OBLIGATIONS OF THE PARTIES</p>
<p>2.1.Պատվիրատուն իրավունք ունի՝</p> <p>2.1.1.Ցանկացած ժամանակ ստուգելու Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը և համապատասխան ստուգումն իրականացնելու նպատակով Կատարողին տեղեկացնելով այդ մասին առնվազն 1 (մեկ) աշխատանքային օր առաջ կազմակերպչական նկատառումներից ելնելով:</p> <p>2.1.2.Միակողմանի լուծելու պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝</p> <p>ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի 1-ին հավելվածով սահմանված պահանջներին,</p> <p>բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:</p>	<p>2.1. The Contracting Authority shall have the right:</p> <p>2.1.1 To check, any time, the course and quality of the Service provided by the Contractor, without intervening in the activities of the latter and in notifying of such checking the Contractor with a prior advance of 1 (one) working day for organisation purposes;</p> <p>2.1.2 To rescind the Contract unilaterally, where the Contractor has significantly violated the Contract. Violation of the Contract by the Contractor shall be deemed to be significant, where:</p> <p>(a)The Service provided fails to comply with the requirements prescribed by Annex No 1 to the Contract;</p> <p>(b)The time limit for provision of the Service has been violated.</p>
<p>2.2.Պատվիրատուն պարտավոր է՝</p> <p>2.2.1.Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված</p>	<p>2.2 The Contracting Authority shall be obliged:</p> <p>2.2.1 To discuss and accept the results of the Service provided in compliance with Technical Specification-Procurement</p>

<p>ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին անհամապատասխանություններ հայտնաբերելու դեպքում այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:</p> <p>2.2.2. Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս կողմից պատշաճ կերպով մատուցված ծառայության դիմաց վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:</p> <p>2.2.3. Կատարողին տրամադրել անվտանգության գործող չափորոշիչներին համապատասխանող միջոցներ և սարքավորումներ:</p> <p>2.2.4. Կատարողին հատկացնել ուսուցման սենյակ և անհրաժեշտ սարքավորումներ, այդ թվում՝ տեսապրոյեկտոր, գրատախտակ և նմանատիպ այլ պարագաներ:</p> <p>2.2.5. Ձեռնարկել համապատասխան միջոցներ՝ Կատարողի անձնակազմի համար ծառայության իրականացման համար անհրաժեշտ յուրաքանչյուր տարածք կամ գոտի մուտք գործելու իրավունքը ժամանակին ապահովելու համար:</p> <p>2.2.6. Որևէ տուգանք կամ տույժ կիրառելիս նախապես ծանուցել Կատարողին:</p>	<p>Schedule, and in case of detecting non-compliance with the Technical Specification Procurement Schedule in the Service deliverable — immediately inform the Contractor thereon in writing;</p> <p>2.2.2 To pay — in case of accepting the Service deliverable — the Contractor the amounts payable for the Service properly provided by the latter, and in case of violation of the time limit for payment— also the penalty provided for by point 5.5 of the Contract;</p> <p>2.2.3 To provide the Contractor with means and equipment complying with the safety standards.</p> <p>2.2.4 To provide the Contractor with a training room and necessary equipment such as video projector, whiteboard and similar items;</p> <p>2.2.5 To arrange for the Contractor's staff to timely obtain the relevant access to each sit or area relevant for the realisation of the Service;</p> <p>2.2.6 To discuss any issue with the Contractor prior any fine not penalty application. Notify the Executor in advance when imposing any fine or penalty.</p>
<p>2.3. Կատարողն իրավունք ունի՝</p> <p>2.3.1. Պատվիրատուից պահանջելու վճարել պատշաճ մատուցված ծառայության դիմաց վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:</p> <p>2.3.2. Լուծելու Պայմանագիրը՝ Պատվիրատուի կողմից պայմանագրի խախտման դեպքում, ինչպես նաև պայմանագիրը լուծելու այն հիմքերով, որոնք նախատեսված են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով:</p>	<p>2.3 The Contractor shall have the right:</p> <p>2.3.1 To request from the Contracting Authority to pay the amounts payable for the Service properly provided and in case of violation of the time limit for payment indicated in point 4.2 of the Contract by the Contracting Authority — also the penalty provided for by point 5.5 of the Contract.</p> <p>2.3.2. To terminate the Contract if the Contracting Authority breaches the Contract, as well as for the grounds for termination provided for in the Armenian Civil Code.</p>
<p>2.4. Կատարողը պարտավոր է՝</p> <p>2.4.1. Պայմանագրի 1-ին հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության պատշաճ մատուցումը՝ համաձայն սույն պայմանագրի:</p> <p>2.4.2. Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:</p>	<p>2.4 The Contractor shall be obliged:</p> <p>2.4.1. To ensure proper provision of the Service in accordance with the Contract, under the conditions set forth in Appendix 1 to the contract.</p> <p>2.4.2. To pay, in cases provided for by the Contract, the penalty and fine provided for by points 5.2 and 5.3 of the Contract.</p>
<p>3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ</p>	<p>3. PROCEDURE FOR DELIVERY AND ACCEPTANCE OF THE SERVICE</p>
<p>3.1. Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ (ինչպես նկարագրված է 3-րդ հավելվածում): Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:</p>	<p>3.1. The provided Service shall be accepted by signing the Delivery and Acceptance Protocol (as per Annex 3) between the Contracting Authority and the Contractor. The fact of delivering the Service to the Contracting Authority shall be recorded through a document mutually approved by the Contracting Authority and the Contractor, indicating the date</p>

<p>Մինչև պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման համար նախատեսված օրը Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (3.1 հավելված), ինչպես նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (3-րդ հավելված):</p> <p>3.2. Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ապա ստորագրվում է հանձնման-ընդունման արձանագրություն: Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և ա) ձեռնարկում է նման իրավիճակի դեպքում հարցը կարգավորելու համար պայմանագրով նախատեսված միջոցներ,</p> <p>բ) Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:</p> <p>3.3. Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունն ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում պարտավոր է Կատարողին տրամադրել հանձնման-ընդունման արձանագրության իր կողմից ստորագրված 1 (մեկ) օրինակ կամ ծառայությունները չընդունելու վերաբերյալ հիմնավորված մերժումը:</p> <p>3.4. Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կատարողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:</p>	<p>of drawing up of the document.</p> <p>Before the date of provision of the Service envisaged by the Contract, the Contractor shall provide the Contracting Authority with the document recording the fact of delivering the Service to the Contracting Authority signed thereby (Annex No 3.1), as well as the Delivery and Acceptance Protocol (Annex No 3).</p> <p>3.2. The Delivery and Acceptance Protocol shall be signed where the services performed comply with the terms of the Contract. Otherwise, the results of performance of the Contract or a part thereof shall not be accepted, the Delivery and Acceptance Protocol shall not be signed and the Contracting Authority shall:</p> <p>a) Undertake measures provided for by the Contract for such situation to regulate the issue;</p> <p>b) Apply liability measures provided for by the Contract against the Contractor.</p> <p>3.3. The Contracting Authority shall, within 5 (five) working days counted from the working day following the day of receipt of the Delivery and Acceptance Protocol, submit to the Executor 1 (one) copy of the Delivery and Acceptance Protocol signed thereby or the reasoned rejection for not accepting the services.</p> <p>3.4. Where the Contracting Authority does not accept the provided Service or does not reject acceptance thereof within the time limit prescribed by point 3.3 of the Contract, the provided Service shall be deemed to be accepted, and the Contracting Authority shall provide to the Contractor — on the day following the deadline prescribed by point 3.2 of the Contract — the Delivery and Acceptance Protocol approved by the Contracting Authority.</p>
<p align="center">4.ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ</p>	<p align="center">4.CONTRACT PRICE</p>
<p>4.1.Սույն պայմանագրով Պատվիրատուն վճարում է 42 000 եվրոյին համարժեք շնորհաբար՝ Կատարողի կողմից մատուցման ենթակա ծառայության դիմաց:</p> <p>Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը: Ծառայության մատուցման գինը ֆիքսված է, և Կատարողն իրավունք չունի պահանջելու ավելացնել այն, իսկ Պատվիրատուն իրավունք չունի պահանջելու նվազեցնել այն:</p> <p>4.1.1. Պայմանագրին ուժի մեջ մտնելուց հետո Պատվիրատուն պայմանագրի գնից մինչև 21 000 եվրոյին համարժեք շնորհաբար փոխանցում է Կատարողի բանկային հաշվին՝ որպես կանխավճար: Կանխավճարի մարումն իրականացվում է հանձնման-ընդունման արձանագրությունների հիման վրա կատարվող վճարումներից նվազեցումներ (պահումներ) կատարելու ձևով: Ընդ որում մինչև կանխավճարի ամբողջական</p>	<p>4.1 By this Contract, the Contracting Authority shall pay a price of for the Service to be provided by the Contractor of 42 000 EUR (forty-two thousand euros),</p> <p>The price includes all costs incurred by the Contractor. The price for providing the Service is fixed and the Contractor is not entitled to require increase and Contracting Authority is not entitled to require decrease of that price.</p> <p>4.1.1. Upon signature of the Contract by the Parties, the Contracting Authority shall transfer up to of 21 000 EUR (twenty-one thousand euros), of the Contract price to the bank account of the Contractor, as an advance payment. Redemption of the advance payment shall be carried out in the form of deductions (withholdings) from payments made on the basis of the Delivery and Acceptance Protocols.</p>

<p>մարումը, Կատարողին վճարումներ չեն կատարվում:</p> <p>4.1.2. Ծառայության մատուցումն ավարտելուց և հանձնման-ընդունման արձանագրությունն ստանալուց հետո Պատվիրատուն պայմանագրի գնից մինչև 21 000 եվրոյին (քսանմեկ հազար եվրո) համարժեք դրամ գումար է փոխանցում Կատարողի բանկային հաշվին՝ որպես վերջնական մարում:</p> <p>4.2. Պայմանագրի 3-րդ բաժնով սահմանված կարգով այն ընդունելու դեպքում Պատվիրատուն վճարում է իրեն մատուցած ծառայության դիմաց եվրոյով, անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (2-րդ հավելված) նախատեսված ժամկետներին, բայց ոչ ուշ, քան հաշիվ-ապրանքագիրն ստանալուց հետո երեսուն (30) աշխատանքային օրվա ընթացքում:</p> <p>4.3. Պատվիրատուի կողմից Կատարողին արվող բոլոր վճարումներն իրականացվում են առանց որևէ տեսակի պահման՝ բացառությամբ այն դեպքերի, երբ օրենքով այլ բան է պահանջվում, և եթե նման որևէ պահում է պահանջվում, ապա Պատվիրատուն անհապաղ գրավոր ծանուցման միջոցով տեղեկացնում է Կատարողին և վճարում լրացուցիչ գումարն այնպես, որ անհրաժեշտ բոլոր պահումները հանելուց հետո Կատարողի կողմից ստացվող մաքուր գումարը հավասար լինի այն գումարին, որը Կատարողը կստանա, եթե պահումներ չպահանջվեին:</p>	<p>Moreover, no payments are made to the Contractor until the advance payment is fully paid.</p> <p>4.1.2. Upon completion of the Service and receipt of the Delivery and Acceptance Protocol, the Contracting Authority shall transfer up to 21 000 EUR (twenty-one thousand euros), of the Contract price to the bank account of the Contractor, as the final payment.</p> <p>4.2. The Contracting Authority shall pay for the Service, in case of accepting it in the manner prescribed by section 3 of the Contract, provided thereto in Euros, in a non-cash form, by transferring the funds to the settlement account of the Contractor. Transfer of funds shall be made based on a Delivery and Acceptance Protocol, in the timing provided for by the payment schedule of the Contract (Annex No 2), and no later than thirty (30) working days after the reception of the invoice.</p> <p>4.3. All payments by the Contracting Authority to the Contractor will be free of all withholdings of any nature whatsoever except to the extent otherwise required by law, and if any such withholding is so required, the Contracting Authority shall promptly notify the Contractor by written notification and will pay an additional amount such that after the deduction of all amounts required to be withheld, the net amount received by the Contractor will equal the amount that the Contractor would have received if such withholding had not been required.</p>
<p align="center">5.ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՍՎՈՒԹՅՈՒՆԸ</p>	<p align="center">5.LIABILITY OF THE PARTIES</p>
<p>5.1. Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման պայմանագրով սահմանված պահանջների պահպանման համար: Կատարողը ներկայացնում է ծառայությունների նկարագրությունը, որում սահմանված են ուսուցման նպատակները, ինչպես նաև այն նախապայմանները, որոնք ապագա ուսումնառուները պետք է բավարարեն:</p> <p>5.2. Կատարողը պատասխանատվություն է կրում միայն այն ուղղակի վնասների համար, որոնք բացառապես առաջացել են ծառայության ոչ պատշաճ կատարման արդյունքում բացառելով անուղղակի, ոչ նյութական կամ հետևանքային վնասները:</p> <p>Կատարողը պատասխանատվություն չի կրում այն վնասների համար, որոնք առաջացել են Պատվիրատուի գործողությունների, անգործության և (կամ) իր պարտավորությունները չկատարելու հետևանքով, մասնավորապես՝ ժամանակացույցին և (կամ) նախապայմաններին չհամապատասխանելու դեպքում:</p> <p>Բացառությամբ դիտավորյալ խախտման, դիտավորյալ խաբեության կամ կոպիտ անփութության հետևանքով առաջացած վնասների՝ Կատարողի ընդհանուր պատասխանատվությունը սույն պայմանագրի շրջանակում</p>	<p>5.1. The Contractor shall comply with the requirements of the Contract for the provision of the Service. The Contractor provides a description of the Services, which sets out the objectives of the training and the prerequisites to be met by the future trainees.</p> <p>5.2. The Contractor shall be liable solely for the direct damages exclusively arising from the improper execution of the Service, excluding any indirect, immaterial or consequential damages.</p> <p>The Contractor shall not be liable for damages arising from the Contracting Authority's acts, omissions and/or failures to fulfil its obligations, especially in the event of non-compliance with the schedule and/or pre-requisites.</p> <p>Except for damages resulting from intentional breach, intentional fraud or gross negligence, the total liability of the Contractor under this Contract shall not exceed 10% of the Contract price.</p> <p>5.3 In each case of provision of a Service not complying with the Technical Specifications-Procurement Schedule indicated</p>

<p>չպետք է գերազանցի պայմանագրով սահմանված զնի 10%-ը:</p> <p>5.3.Ամեն անգամ ծառայությունը սույն պայմանագրի 1-ին հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին ոչ համապատասխան ձևով մատուցելու դեպքում Կատարողից բռնագանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետով սահմանված գումարի 0.5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Բացի այդ, տուգանքը հաշվարկվում է նաև այն դեպքում, երբ ծառայությունը մատուցվել է սույն Պայմանագրով սահմանված ժամկետում, սակայն Պատվիրատուն այն չի քննդրնել:</p> <p>5.4.Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության զնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:</p> <p>5.5.Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:</p> <p>5.6.Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն սահմանված ժամկետում չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:</p> <p>5.7.Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:</p>	<p>referred to Annex No 1 to the Contract, a fine shall be levied from the Contractor in the amount of 0.5 (zero-point five decimal) per cent of the amount provided for in point 4.1 of the Contract. Moreover, the fine shall also be calculated in case of provision of the Service within the time limit prescribed by this Contract, but not accepted by the Contracting Authority.</p> <p>5.4. In case the time limits for provision of the Service provided for by the Contract has been violated, a penalty shall be charged from the Contractor for each delayed working day in the amount of 0,05 (zero point five hundredth) per cent of the price of the Service due but not provided.</p> <p>5.5. The fine and the penalty provided for by points 5.2 and 5.3 of the Contract shall be calculated and offset along with the amounts payable to the Contractor after provision of the Service.</p> <p>5.6. In case the Contracting Authority violates the time limit provided for by point 4.2 of the Contract, a penalty shall be calculated for the Contracting Authority for each delayed working day in the amount of 0,05 (zero point five hundredth) per cent of the amount due but not paid within the prescribed time limit.</p> <p>5.7. In cases not provided for by the Contract, the Parties shall be held liable for failure to perform or for improper performance of their obligations, as prescribed by the legislation of the Republic of Armenia.</p>
<p align="center">6.ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱՉՂԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ ՄԱՃՈՐ)</p>	<p align="center">6.IMPACT OF FORCE MAJEURE (FORCE MAJEURE)</p>
<p>6.1.Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Անհաղթահարելի ուժի ազդեցությունը կրած Կողմը հնարավորինս շուտ տեղեկացնում է մյուս Կողմին նշելով այդպիսի իրադարձության բնույթը, տևողությունը և կանխատեսվող հետևանքները: Ազդեցություն կրած Կողմը մյուս Կողմին տեղեկացնում է այն ամսաթվի մասին, երբ արգելքը դադարում է գոյություն ունենալ: Այդպիսի իրավիճակներ կարող են լինել արտահանման լիցենզիա չտրամադրելը, երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, բնական այլ աղետներ, պատերազմը հայտարարված կամ չհայտարարված, ահաբեկչական հարձակումը տվյալ տարածքում, ռազմական դրություն կամ արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական խժոժությունները, քաղաքացիական պատերազմը, գործադուլները,</p>	<p>6.1 The Parties shall — for failure to perform fully or partially the obligations under this Contract and the agreements concluded on the basis of this Contract — be released from liability, where it occurred due to the impact of force majeure which has arisen after the Contract has been concluded and which the Parties could not have foreseen or prevented. The affected Party shall notify the other Party as soon as possible, specifying the nature, duration and foreseeable effects of such event. The affected Party shall notify the other Party of the date on which the impediment ceases to exist. Such situations shall be the non-issuance of an Export License, earthquake, floods, fire, other natural disasters, war, declared or not, terrorist attack in the concerned area, declaring martial law or state of emergency, political disturbances, civil war, strikes, interruption of means of communication, the acts of state authorities, accidents, epidemics, quarantine, etc., that make performance of the obligations assumed under this Contract impossible. Where the impact of the force majeure lasts for more than 1 (one) month, each of the Parties shall have the</p>

<p>հաղորդակցության միջոցների խափանումը, պետական իշխանությունների գործողությունները, պատահարները, համաճարակները, կարանտինը և այլ իրավիճակներ, որոնք սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների կատարումը դարձնում են անհնարին: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 1 (մեկ) ամսից ավելի, ապա Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծելու պայմանագիրը այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս Կողմին:</p>	<p>right to rescind the Contract by informing the other Party thereon in advance.</p>
<p align="center">7.ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ</p>	<p align="center">7.OTHER CONDITIONS</p>
<p>7.1.Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում հետևյալ պայմանները բավարարելու դեպքում. ա) Կողմերի կողմից պայմանագրի ստորագրում, բ) Կատարողի կողմից ծառայության հետ կապված արտահանման լիցենզիայի ստացում: Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է պայմանագիրը Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը: 7.2.Կատարողը կարող է մեկնարկել ծառայությունների մատուցումը, երբ կատարված են հետևյալ համակցված պայմանները. ա) ձեռք են բերվել ծառայությունների մատուցման համար Ֆրանսիայի կառավարության կողմից պահանջվող բոլոր թույլտվությունները, բ) Կատարողը ստացել է տեղեկությունների չբացահայտման մասին ստորագրված համաձայնագիրը և (կամ) 8-րդ կետում նշված Վերջնական օգտագործողի հավաստագիրը, ինչպես նաև վերացվել են արտահանման լիցենզիայով պահանջվող բոլոր պայմանները, գ) Կատարողն ստացել է 4.1.1-ով սահմանված կանխավճարը: 7.3.Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած հակընդդեմ պարտավորության հաշվանցմամբ, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի՝ առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության: 7.4.Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում, գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն, հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ</p>	<p>7.1. The Contract shall enter into force upon completion of the following conditions: a) The signature of the Contract by the Parties, b) The receipt by the Contractor of the Export Licence related to the Service. Registration of the Contract by the Ministry of Finance of the Republic of Armenia shall constitute a condition for implementation of the rights and the obligations of the Parties provided for by the Contract. 7.2.The beginning of the Services by the Contractor shall be subject to the fulfilment of the following cumulative conditions: a) All authorization required from the French Government perform the Services have been obtained, b) The receipt by the Contractor of the signed non-disclosure agreement and/or of the End-User Certificate referred to in point 8 and the lifting of all conditions required by the export licence, c) The receipt by the Contractor of the advanced payment defined in point 4.1.1. 7.3. Party's payment obligation arisen from the Contract may not terminate with the offset of a counter-obligation arisen from another contract, without the written consent of the Parties, confirmed with a seal. The right of claim arisen from the Contract may not be transferred to another person without the written consent of the debtor Party. 7.4. Where as a result of control or supervision over observance of requirements of the law of the Republic of Armenia or as a result of examination of the appeals as prescribed by law it is recorded that in the procurement process, prior to the conclusion of the Contract, the Contractor had submitted false documents (information and data) the Contracting Authority shall — upon the emergence of these grounds — unilaterally rescind the Contract, where, pursuant to the legislation of the Republic of Armenia on procurement, the detected deficiencies, having emerged prior to the conclusion of the Contract, would have served as a ground for not concluding the Contract. Moreover, the</p>

որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.5. Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Փարիզի առևտրի միջազգային պալատի կողմից:

7.6. Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է փոփոխություններ կատարել պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը հիմնված է գործոնների վրա, ապա նաև այդ պայմանագրին կից՝ հաջորդող յուրաքանչյուր տարում կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավոր գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ սահմանվում է Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից:

7.7. Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի գրավոր առաջարկի առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի համար ծառայության մատուցման պահանջը չի վերացել, իսկ Կատարողի գրավոր առաջարկը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 7 օրացուցային օր առաջ: Ընդ որում, սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ՝ մինչև երեսուն (30) օրացուցային օրով, բայց ոչ ավելի, քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.8. Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում Կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ Կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի Կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները, ներառյալ՝ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած մյուս գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման շրջանակներից և չեն ազդում պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

Contracting Authority shall not bear the risk of damages or lost profit incurred by the Contractor as a result of unilateral rescission of the Contract, and the latter shall be obliged to compensate for the damages suffered by the Contracting Authority due to the Contractor's fault as prescribed by the law of the Republic of Armenia and to the extent to which the Contract has been rescinded.

7.5. Disputes related to the Contract shall be subject to examination by the International Chamber of Commerce of Paris.

7.6. Amendments and supplements may be made to the Contract only upon mutual consent of the Parties by way of conclusion of an agreement that shall form the integral part of the Contract.

It shall be prohibited to make amendments to the Contract and, where the Contract price is factor-based — also to any agreement attached to the Contract concluded in the subsequent years, which may result in the artificial change in the volumes of the Service to be procured or in the unit price of the Service to be obtained or of the Contract price.

Each case of amendment to the Contract under the influence of factors not dependent on the Parties to the Contract shall be defined by the Government of the Republic of Armenia.

7.7. Upon written request of the Contractor, the time limit for provision of the Service may be extended prior the expiry of that time limit under the Contract, provided that the need for provision of the Service still exists for the Contracting Authority and the written request of the Contractor has been submitted no later than at least 7 (seven) calendar days before expiry of the time limit initially prescribed by the Contract for provision of the Services. Moreover, in the case prescribed by this point the time limit for provision of the Service may be extended once for up to thirty (30) calendar days, but for no longer, than the period prescribed by the Contract.

7.8. In case of proper performance of the Contract, the benefits (savings) or damages of the Parties (Contractor or Contracting Authority) shall be deemed to be the benefit of or damage incurred by the given Party.

The obligations of the Parties to the Contract to third persons, including other transactions concluded by the Contractor within the scope of performance of the Contract and the obligations resulting therefrom shall be beyond the scope of the Contract and shall not affect the acceptance of the deliverable resulting from the performance of the Contract. The relations pertaining to such transactions and the obligations arising therefrom shall be regulated by the rules governing the relations pertaining to those transactions, and

<p>7.9. Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի Կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման վերաբերյալ փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:</p> <p>7.10. Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է «www.procurement.am» հասցեով գործող համացանցային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Պայմանագիրն ուժի մեջ է մտնում ծանուցման հրապարակման օրվան հաջորդող աշխատանքային օրվանից: Պայմանագիրը լրիվ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն էլեկտրոնային փոստով ուղարկում է նաև Կատարողին:</p> <p>7.11. Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով՝ 7.4 կետով սահմանված ձևով:</p> <p>7.12. Սույն պայմանագիրը կազմված է 36 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի 1-ին, 2-րդ, 3-րդ, 3.1 և 4-րդ հավելվածները կազմում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:</p> <p>7.13. Պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով կամ լուծվում գնումների մասին ՀՀ օրենքով սահմանված կարգով:</p> <p>7.14. Ծառայությունների մատուցման գործընթացն ապահովագրված է երրորդ անձանց նկատմամբ պատասխանատվության ապահովագրման վկայագրով, որը կնքված է Կատարողի կողմից: Կատարողը պարտավորվում է երրորդ անձանց նկատմամբ պատասխանատվության ապահովագրության վկայագիրը ներկայացնել ըստ պահանջի:</p>	<p>the Contractor shall be liable for them.</p> <p>7.9. The Contract may not be modified as a result of failure by the Parties to partially perform the obligations or may not be fully rescinded upon mutual consent of the Parties, except for cases of reduction of financial allocations required for provision of Services as prescribed by the legislation of the Republic of Armenia. Moreover, mutual agreement of the Parties to the Contract on partial performance of the obligations or on full rescission must be obtained, as prescribed by the legislation of the Republic of Armenia, prior to reduction of the financial allocations designed for provision of Services.</p> <p>7.10. The notification on full or partial unilateral rescission of the Contract on the ground of failure to perform or due to improper performance of the obligations assumed by the Contractor shall be published by the Contracting Authority in the section "Notifications on unilateral rescission of contracts" of the website at the following address: www.procurement.am, with the indication of the date of publication. The Contractor shall be considered as properly notified of unilateral rescission of the Contract as of the working day following the publication of the notification, as prescribed in this point. On the date of publication of the notification on full or partial unilateral rescission of the Contract in the bulletin, the Contracting Authority shall also send the notification to the Contractor via electronic mail.</p> <p>7.11. Disputes arisen in relation to this Contract shall be settled through negotiations. In case of failure to reach an agreement, the disputes shall be settled through arbitration procedure as set out under point 7.4.</p> <p>7.12. This Contract consists of 36 pages, it is concluded in two copies having equal legal effect. Annexes No 1, No 2, No 3, No 3.1 and No 4 to this Contract shall form an integral part of the Contract, each Party shall be provided with one copy of the Contract.</p> <p>7.13. The provision of services stipulated by the contract is carried out upon the availability of financial resources for this purpose and upon the conclusion of a corresponding agreement between the parties on this basis, or is resolved in accordance with the procedure established by the RA Law on Procurement.</p> <p>7.14. The performance of the Services is covered by a third-party liability insurance policy subscribed by the Contractor. The Contractor will provide the third-party liability insurance certificate upon request.</p>
<p align="center">8.ԱՐՏԱՀԱՆՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԻ ՎԵՐԱՀՄԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ</p>	<p align="center">8. EXPORT CONTROL</p>

<p>8.1. Պատվիրատուն ընդունում է, որ Ընկերության կողմից մատուցվող ծառայությունների արտահանման համար անհրաժեշտ է ստանալ Ֆրանսիայի կառավարության թույլտվությունը:</p> <p>8.2. Ֆրանսիայի կառավարությունը կարող է պահանջել ստորագրելու որոշակի փաստաթղթեր, որոնց շարքին կարող են դասվել՝</p> <p>ա) 5-րդ հավելվածին կցված՝ Վերջնական օգտագործողի վկայականը՝ պատշաճ կերպով ստորագրված Պատվիրատուի, ինչպես նաև ծառայությունների մատուցմանը մասնակցող հայկական բոլոր կառույցների և ընկերությունների կողմից,</p> <p>բ) 6-րդ հավելվածին կցված՝ Տեղեկությունների չբացահայտման մասին համաձայնագիրը՝ պատշաճ կերպով ստորագրված յուրաքանչյուր մասնակցի կողմից:</p> <p>8.3. Կատարողը հնարավորինս շուտ տեղեկացնում է Պատվիրատուին, թե Ֆրանսիայի կառավարությունը վերը նշված փաստաթղթերից որն (որոնք) է պահանջում: Պատվիրատուն պարտավորվում է մինչև ծառայությունների մեկնարկը/ընթացքը Կատարողին վերադարձնել Կատարողի կողմից պահանջվող ստորագրված փաստաթուղթը (փաստաթղթերը):</p> <p>8.4. Մինչև ծառայությունների մեկնարկը Կատարողի կողմից պահանջվող ստորագրված փաստաթուղթն ստանալը նախապայման է ծառայությունների մատուցման համար:</p> <p>8.5. Պատվիրատուն պարտավոր է Կատարողին տրամադրել բոլոր այն ընկերությունների ցանկը, որոնց ներկայացուցիչներն օգտվում են ծառայություններից: Այս պահանջը չկատարելու դեպքում՝ Կատարողը չի կարողանա և իրավասու չի լինի մատուցելու ծառայությունները:</p> <p>8.6. Արտահանման լիցենզիայի պաշտոնական տրամադրումից հետո Ֆրանսիայի կառավարությունը կարող է կիրառել լրացուցիչ պայմաններ: Այդպիսի պայմանների առկայության դեպքում Կատարողն անհապաղ այդ մասին տեղեկացնում է Պատվիրատուին:</p>	<p>8.1. The Contracting Authority acknowledges that the Services performed by the Company require a French governmental authorization in order to be exported.</p> <p>8.2. The French Government may require the signature of specific documents, which can be:</p> <p>a) An End-User Certificate as attached in Annex 5, duly signed by the Contracting Authority, and by all Armenian bodies and companies attending the Services;</p> <p>b) A non-disclosure agreement as attached in Annex 6, duly signed by each attendee.</p> <p>8.3. The Contractor will, as soon as possible, inform the Contracting Authority which of the above documents the French Government requires. The Contracting Authority undertakes to return to the Contractor, prior to the beginning/continuation of the Services, the required signed document as requested by the Contractor.</p> <p>8.4. The receipt by the Contractor of the required signed document before the beginning/continuation of the Services is a condition precedent to the performance of the Services.</p> <p>8.5. The Contractor will need to be provided with by the Contracting Authority a list of all the companies with attendees benefiting from the Services. Failure to comply with this requirement will make the Contractor unable and unauthorized to deliver the Services.</p> <p>8.6. Additional conditions from the French Government could be considered when the export license is officially issued. The Contractor will immediately inform the Contracting Authority if any.</p>
<p align="center">9. ԳԱՐՏՆԻՈՒԹՅՈՒՆԸ, ՄՏԱՎՈՐ ՄԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԱՂՈՂՂԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ</p>	<p align="center">9. CONFIDENTIALITY, INTELLECTUAL PROPERTY AND COMMUNICATION</p>
<p>9.1. Գաղտնիությունը</p> <p>9.1.1. «Գաղտնի տեղեկություն» նշանակում է որևէ կողմի (Բացահայտող կողմ) կողմից մյուս կողմին (Ստացող կողմ) բացահայտվող ցանկացած և բոլոր ծառայողական և (կամ) գաղտնի և (կամ) զգայուն առևտրային և (կամ) տեխնիկական տեղեկություններ՝ անկախ դրանց թեմայից (տեխնիկական, արդյունաբերական, ֆինանսական, առևտրային և այլն), բնույթից (նոր-հառու, մեթոդներ, գործընթացներ, տեխնիկական կամ տեղակայման վերաբերյալ մանրամասներ և այլն), ձևից (գրավոր կամ սուպրաֆիզիկական փաստաթղթեր, CD-ROM, ձևամուշներ, մոդելներ, գծագրեր և այլն) կամ փոխանցման եղանակից (գրավոր, բանավոր, համակարգչային, ներառյալ՝ ցանցերը և (կամ) էլեկտրոնային փոստը), տեղեկություններ, որոնք առկա են կամ որևէ կերպ կապված են ծառայությունների հետ, և երբ անհրաժեշտություն չկա, որ Բացահայտող Կողմը</p>	<p>9.1. Confidentiality</p> <p>9.1.1. "Confidential Information" means any and all proprietary and/or confidential and/or sensitive commercial and/or technical information disclosed by a party ("Disclosing Party") to the other party ("Receiving Party"), whatever the subject (technical, industrial, financial, commercial etc), the nature (know-how, methods, processes, technical or installation details etc), the form (written or printed documents, CD Rom, samples, models, drawings etc) and the mode of transmission (written, oral, computer, including networks and/or electronic mail), in relation to or in any way connected with the Services, without need for the Disclosing Party to confirm the confidential nature of the information disclosed.</p>

հատուկ նշի բացահայտվող տեղեկությունների գաղտնի բնույթի մասին:

9.1.2. Պատվիրատուն, սկսած սույն պայմանագիրն ստանալու վերաբերյալ ստորագրությունը դնելու ամսաթվից և մինչև հինգ (5) տարվա ժամկետի ավարտը, պարտավորվում է ապահովել, որ գաղտնի տեղեկությունը՝ ա) պաշտպանված լինի և պահվի խիստ գաղտնի, և այդ տեղեկությունների նկատմամբ ցուցաբերվի առնվազն նույն զգուշավորությունն ու պաշտպանությունը, ինչ իր սեփական նույն կարևորությունն ունեցող գաղտնի տեղեկությունների նկատմամբ,

բ) տարածվի միայն այն աշխատակիցների շրջանում, որոնց համար այդ գաղտնի տեղեկությունն իմանալը փաստացի անհրաժեշտ է ծառայությունների մատուցումն ապահովելու տեսանկյունից՝ պայմանով, որ Պատվիրատուն ապահովի, որ այդ անձինք բավարարեն սույն կետով սահմանված գաղտնիությանն առնչվող պարտավորությունները պահպանելու նույն պահանջները,

գ) առանց Բացահայտող կողմի կողմից նախնական գրավոր համաձայնության ամբողջությամբ կամ մասամբ չօգտագործվի այլ նպատակներով՝ բացի ծառայությունների հետ կապված նպատակներից:

9.1.3. Կատարողի կողմից գաղտնի տեղեկությունների բացահայտումը որևէ պարագայում չպետք է մեկնաբանվի որպես այդ գաղտնի տեղեկությունների նկատմամբ արտոնագրային կամ այլ իրավունքների տրամադրում: Նույնը վերաբերում է մտավոր կամ արդյունաբերական սեփականության իրավունքներից բխող հոնորարներին կամ մյուս իրավունքներին՝ մտավոր և արդյունաբերական սեփականության իրավունքներին, հեղինակային իրավունքին, ապրանքանիշերի կամ առևտրային գաղտնիքների հետ կապված այլ իրավունքների:

9.2. Մտավոր սեփականությունը

9.2.1. Կատարողի կողմից ծառայությունների շրջանակներում և դրանցից բխող բացահայտված ամբողջ տեղեկությունների նկատմամբ, անկախ նյութից, մտավոր սեփականության իրավունքները, մասնավորապես՝ ծառայությունների վերաբերյալ նյութերը և ծառայությունների մատուցման կամ իրականացման համար տրամադրված մյուս փաստաթղթերը պատկանում են բացառապես Կատարողին:

9.2.2. Ծառայությունների գնի վճարումը չի ենթադրում մտավոր սեփականության որևէ իրավունքի փոխանցում:

9.2.3. Չհակասելով վերոնշյալին Կատարողը երբորդ անձանց իրավունքների պահպանմամբ մասնակիցներին տրամադրում է ոչ բացառիկ, չփոխանցվող և խիստ անձնական լիցենզիա ծառայությունների մատուցման ընթացքում ծառայության վերաբերյալ ցանկացած ձևով տրամադրված նյութերն օգտագործելու համար: Մասնակիցներն իրավունք ունեն լուսապատճենելու այդ նյութերն ուսումնական նպատակով՝ բացառապես իրենց անձնական օգտագործման համար պայմանով, որ յուրաքանչյուր պատճենված նյութի վրա պետք է նշված լինի Կատարողի հեղինակային իրավունքը կամ մտավոր

9.1.2. The Contracting Authority hereby undertakes, from the date of the signature of receipt of this Contract and until the end of a period of five (5) years, that the Confidential Information shall:

a) be protected and kept strictly confidential and treated with at least the same degree of care and protection as it uses to treat and protect its own Confidential Information of like importance;

b) be disseminated only to its personnel having a demonstrable need to know such Confidential Information for the need of the Services, provided that the Contracting Authority shall ensure that such persons shall comply with the same confidentiality obligations as provided herein;

c) not be used, in whole or in part, for purposes other than relating to the Services, without the prior written authorisation of the Disclosing Party.

9.1.3. The disclosure of Confidential Information by the Contractor shall not, under any circumstance, be construed as granting or conferring any rights by license or otherwise in any Confidential Information. The same applies as regards intellectual or industrial property rights' royalties or other rights related to intellectual and industrial property, copyrights, brands or business secrets.

9.2. Intellectual property

